ՍՈՒՍԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ
ՀԱԻ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայ Առաքելական Եկեղեցու միաբան Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցն այն եզակիներից է, ում վիճակված է կրելու ե՛ւ հոգեւորականի, ե՛ւ վիմագրագետի, ե՛ւ շինարարի պատվավոր կոչումը:

Մեսրոպ Սմբատյանցը (1833-1911 թթ.) ծնվել է Նախիջեւանի Փորադաշտ գյուղում՝ հոգեւորականի ընտանիքում: Սովորել է Նախիջեւանի գավառական ուսումնարանում (1845-1847 թթ.), ապա՝ Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցում: 1856 թ. ձեռնադրվել է սարկավագ, 1872 թ.՝ եպիսկոպոս, իսկ 1888 թ.՝ արքեպիսկոպոս:

Մ. Սմբատյանցն իր հոգեւորական կյանքին զուգահեռ ծավալել է շինարարական ակտիվ գործունեություն պատմական Գեղարքունիք, Նախիջեւան, Երնջակ գավառներում եւ Աղվանքում: Այստեղ կառուցել կամ վերակառուցել է մի շարք հոգեւոր եւ կրթական հաստատություններ՝ դրանց որմերին թողնելով մեկ տասնյակից ավելի արձանագրություններ: Միայն 1872-1910 թթ. ընթացքում օծել է 33 եկեղեցի[1]*:*

Մեսրոպ սրբազանը, գլխավորելով Մուղնու Ս. Գեւորգ վանքի միաբանությունը, 1868 թ. կառուցել է տեղի վանական դպրոցի համար նախատեսված սենյակներն արեւելյան վերնահարկում, բարեկարգել է պարտեզը[2]*: 1868-70 թթ. լինելով Երեւանի փոխթեմակալ՝ նորոգել է Երեւանի Ս. Սարգիս եկեղեցու առաջնորդարանն ու դպրոցը*[3]*: 1870 թ. Սմբատյան-*

---

[1] **ՀԱԱ,** ֆոնդ 429, ցուցակ 1 (այսուհետ՝ **ՀԱԱ**) , գործ 239, Կենսագրական տեղեկություններ Մ. Սմբատյանի մասին, թերթ 7:

[2] **Մ. Սմբատեանց**, Նկարագիր սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք 'ի Շամախւոյ թեմի (այսուհետ Նկարագիր սուրբ Ստեփաննոսի), Տփխիս, 1896, էջ 558:

[3] **Մ. Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ (այսուհետ Տեղագիր Գեղարքունի), 1895, էջ 8: Հայտնի է Զորագետի անապատ անվամբ, եղել է Երեւանի թեմական առաջնորդարանի եկեղեցին: Ավերվել է 1679 թ. հունիսի 4-ի երկրաշարժի հետեւանքով: Նահապետ Ա. Եդեսացի (1691-1705) Կաթողիկոսի օրոք վերաշինվել է, սակայն ԺԹ. դ. սկզբներին կիսախարխուլ եկեղեցին քանդել են եւ տեղում 1835-42 թթ. Հովհաննես Ը. Կարբեցու օրոք եւ թեմական առաջնորդ Հովհ.

ցի անմիջական միջնորդությամբ հայրը՝ Տեր Աբրահամը եւ եղբայրները հիմնել են հայրենի Նորս գյուղի դպրոցը, որն ընդմիջումներով գործել է մինչեւ 1920 թ.[4]*: 1875 թ. նրանք վերանորոգել են գյուղի Ս. Երրորդություն բազիլիկ եկեղեցին, որը գտնվում է գյուղի հարավային հատվածում: Եկեղեցին կառուցվել է բազալտից, ունի երկու մուտք՝ արեւմուտքից եւ հյուսիսից: Հիմնադրվել է ԺԴ. դ., նորոգվել է մի քանի անգամ*[5]*: Եկեղեցու ուխտի օրը Վարդավառն է: Եկեղեցու մուտքին կից խաչքարի վրա պահպանվել է նորոգումը փաստող արձանագրություն.*

1. Յամի տեառն 1875 եւ Հայոց ՌՅԻԵ. ի կայսերութեան ռուսաց Բ. Ալէքսանդր Նիկոլայեւիչի եւ ի կաթողիկոսութեան ամենայն Հայոց Տեառն Գէորգայ Դ. նորոգեցաւ սուրբ Երրորդութիւն եկեղեցիս արդեամբք ժողովրդոց Նորս գեղջ վերակացութեամբ Աբրահամ քահանայի տէր Կարապետեան Սմբատեանց եւ որդւոյ նորին Սարգիս քահանայի եւ երեսփոխան Պօղոսի Եաւրիեանց[6]:

Մեկ այլ արձանագրություն պահպանվել է գյուղի աղբյուրի քարին.

2. Յամի տեառն 1875 եւ Հայոց ՌՅԻԵ. Ի կայսրութեան ռուսաց Ալէքսանդր Բ Նիկոլայեւիչի եւ ի կաթողիկոսութեան ամենայն Հայոց Տէր Գէորգայ Դ. Շինեցաւ աղբիւրս ի վաելումն տոհմին Սմբատեանց, արդեամբք Աբրահամ քահանայի տեր Կարապետեան-Սմբատեանց եւ որդոյ նորին Սարգիս քահանա եւ պարոն Յակոբայ[7]:

1864-66 թթ. Մ. Սմբատյանցը Շամբի կամ Մաղարդայի Ս. Ստեփանոս Նախավկա վանքի վանահայր լինելու տարիներին վերանորոգել է

Շահխաթունյանի օժանդակությամբ կառուցվել է նոր եւ ավելի մեծ եկեղեցի: Ի. դ. դարձել է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդանիստ եկեղեցին: 1971-76 թթ. վերակառուցվել է Վազգեն Ա. (1955-1994) կաթողիկոսի կողմից. տես **ՔՀ**, Երեւան, 2002, էջ 326:

[4] **ՀԱԱ,** գործ 44, թերթ 110: Եկեղեցական-ծխական դպրոցը բացվել է 1873-ին. տես **Ա. Այվազյան**, Նախիջեւանի վիմագրական ժառանգություն (այսուհետ ՆՎԺ), Երեւան, 2010, հ. Ջ., էջ 52:

[5] Ի. դարի 80-ական թթ. քանդված էին եկեղեցու հյուսիսային ավանդատունն ու պատի մի մասը: Ներկայիս վիճակն անհայտ է: Տես **Ա. Այվազյան,** Նախիջեւան, էսսեներ, հետազոտման ուղեգրություններ, Երեւան, 2007, էջ 593. **Ա. Այվազյան**, ՆՎԺ, հ. Ջ., էջ 55, արձ. 221. **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1853, էջ 484-485: Արձանագրության մեջ նշվում է 1875 եւ ՌՅԻԵ (1876), որը հավանաբար թյուրիմացության արդյունք է:

[6] Մեկ այլ գրառման մեջ արձանագրության վերջում հիշատակվում է «իրիցփոխան Մարգարայ Մկրտչեան»: Տես **ՀԱԱ,** գործ 44, թերթ 112-113. **Ա. Այվազյան**, ՆՎԺ, հ. Ջ, էջ 59:

[7] **ՀԱԱ**, գործ 44, թերթ 13բ: Արձանագրությունը հիշատակում է հետեւյալ շարադրմամբ. «Յամի տեառն 1875 եւ Հայոց ՌՅԻԵ. Ի կայսրութեան ռուսաց Ալէքսանդր Բ. Նիկոլայեւիչի եւ ի կաթողիկոսութեան ամենայն Հայոց Տէր Գէորգայ Դ. Ի տոհմին Սմբատեանց շինի յիշատակ, աղբիւր բղխեցելոց ջրոյ անքանակ, Սարգիս քահանայի ծախիւք Նորսաբնակ, որդւոյ Աբրահամու տեառն հաղթանակ»: Տես **ՀԱԱ**, գործ 44, էջ 18ա. **Ա. Այվազյան**, ՆՎԺ, հ. Ջ., էջ 59, արձ. 251:

տաճարի տանիքը՝ հիշատակություն թողնելով զանգակատան առաջին հարկի՝ հյուսիսարեւմտյան մույթի հարավային նիստին[8]*:*

1875-79 թթ. Մ. Սմբատյանցը կառուցել է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին Վահան Ամատունու հիմնած (443 թ.) եկեղեցու տեղում: Շինարարությանը օժանդակել են Ամենայն Հայոց Գեւորգ Դ. Կաթողիկոսը (1866-1882) եւ Օշականի ազգաբնակչությունը: 1884 թ. ավարտվում է եկեղեցու արեւելյան մասում գտնվող կրկնահարկ զանգակատան կառուցումը, որի գմբեթի վրա Մ. Սմբատյանցի նախաձեռնությամբ կանգնեցվում է մեծադիր խաչ՝ Թիֆլիսեցի Ա. Թայիրյանի նվիրատվությամբ: Նույն թվականին Ս. Մաշտոցի գերեզմանին դրվում է մարմարյա տապանաքարը: Եկեղեցու աջակողմյան ավանդատանն է գտնվում վկայարանի պատմությունն ավանդող հետեւյալ մեծածավալ արձանագրությունը[9]*.*

3. Յամի տեառն 441 փետրվարի 20 / Վահան Ամատունի իշխանն ամ/փոփելով աստ յՕշական ըզմար/մին սրբոյ վարդապետին մեծին / Մեսրովբայ թարգմանչին կա/ռուցեալ է ՝ի վերայ դամբարանիս / յանուն նորին զեկեղեցիս. զոր / նորոգեաց ամի 1640 Փիլիպ/պոս կաթողիկոս. Եւ ի վերջ/նումս յամին 1875 նորոգեաց / Գէորգ Դ կաթողիկոսն տրօք / ժողովրդեան Հայոց Երեւանայ / եւ այլ վիճակացն Ռուսաստանի / իսկ զտապանս կանգնեաց ի յիշա/տակ Կ.Պոլսեցի Անդրէաս արքեպիս/կոպոսն յամին 1882 եւ Հայոց ՌՅԼԱ:

Ավելի վաղ՝ 1860 թվին, եկեղեցուն կից սրբազանը բացել է գյուղի ծխական դպրոցը:

1887-94 թթ. Մ. Սմբատյանցը զբաղեցրել է Շամախու, Անդրկասպյան եւ Բաքվի տարածքների թեմակալ առաջնորդի պաշտոնը: Քանի որ Ատրպատականի թեմը աղքատ էր եւ կարիք ուներ հոգեւոր ու նյութական կյանքի ակտիվացման, ուստի նա երկրամասում իրականացրել է թե՛ հոգեւոր, թե՛ շինարարական ակտիվ գործունեություն: Նրա նախաձեռնությամբ եւ օրհնությամբ վերակառուցվել կամ կառուցվել են 9 եկեղեցի, 9 դպրոց, այդ թվում՝ Ս. Սաղիանի վանքն ու վանական դպրոցը (բաքվաբնակ Բուդաղյան եղբայրների ֆինանսական աջակցությամբ), Բաքվի աղքատանոցը (մեծահարուստ Դիլդարյանցի աջակցությամբ), Շամախի արական դպրոցը, որը գործում էր մինչեւ 1881 թ., սակայն շինության այրվելուց հետո այն փակվել է ցարական կառավարության հրամանով: 1890 թ. Մ. Սմբատյանցի նախաձեռնությամբ կառուցվում է նոր դպրո-

[8] **Մ. Սմբատեանց**, Նկարագիր Ս. Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա (այսուհետ Նկարագիր Ս. Կարապետի), Տփղիս, 1904, էջ 18-19. **Ա. Հախնազարյան**, Արտազի երեք վանքերը, Երեւան, 2012, էջ 318:

[9] **Լ. Հովհաննիսյան,** Օշական, Երեւան, 2014, էջ 26:

ցական չինություն, որն ուներ գրադարան (6 ձեռագիր եւ 450 տպագիր գիրք) եւ ընթերցասրահ[10]: Նրա անմիջական մասնակցությամբ կառուցվել կամ վերաբացվել են Անդրկասպյան Ասղապատի, Գանձակ[11], Գիրք[12], Ղուլակա[13] (Ղալակա), Քիլվար[14], Մեյսարի[15], Ավանաշեն գյուղերի եկեղեցական դպրոցները, Բաքվի հայկական գերեզմանատան Ս. Հարություն մատուռը, Քեալբանդ[16], Բլիստան կամ Բիլիստան[17], Աղբուլաղ[18], Արփավուտ[19], Հնդար[20], Քովլուջ[21], Բզավանդ[22] գյուղերի եկեղեցիները[23]:

---

[10] **Գ. Ստեփանյան**, Համառոտ ակնարկ Շամախու թեմական դպրոցի պատմությունից, ՀՊՀՑ, 2006, թ. 7, էջ 69-70:

[11] Գանձակի (Գյոքչայի գավառ) եկեղեցական-ծխական արական միդասյա դպրոցը կառուցվել է բաքվեցի Հայրապետ Քոչարյանցի ջանքերով: 1889 թ. դպրոցի շինության հիմքերը օրհնվել են Մ. Սմբատյանցի կողմից: Մինչեւ 1896 թ. դպրոցը մի կերպ է գոյատեւել նյութական միջոցների բացակայության պատճառով: Տեմ **Ս. Կարապետյան**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երեւան, 1997, էջ 20:

[12] Գիրք (Գյոքչայի գավառ) գյուղի արական ծխական դպրոցը հիշատակվում է սկսած 1870 թ., հավանաբար Մ. Սմբատյանցը վերաբացել կամ վերաշինել է այն: Տեմ **Գ. Ստեփանյան**, Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, ՀՊՀՑ, 2007, թ. 8, հավելված 7:

[13] Ղուլակայի (Գյոքչայի գավառ) արական ծխական դպրոցը գործել է 1868-ից. տեմ նույն տեղում:

[14] Քիլվարի (Ղուբայի գավառ) ծխական դպրոցը գործել է 1875-ից. տեմ նույն տեղում:

[15] Մեյսարիի (Շամախու գավառ) ծխական դպրոցը բացվել 1894-ին. տեմ նույն տեղում:

[16] Քեալբանդի (Գյոքչայի գավառ) Ս. Աստվածածին եկեղեցին նշվում է 1916 թ. գործող եկեղեցիների ցանկում: Նշվ. աշխ., հավելված 5:

[17] Բիլիստան (Շամախու գավառ) գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին ԺԹ. դարի 80-ական թթ. հիմնավեր վիճակում էր. տեմ **Ս. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 19: Այն նշված է նաեւ 1916 թ. գործող եկեղեցիների ցանկում. **Գ. Ստեփանյան**, նշվ. աշխ., հավելված 5:

[18] Աղբուլաղի (Գյոքչայի գավառ) Ս. Մեսրոպ եկեղեցին նշվում է 1916 թ. գործող եկեղեցիների ցանկում. տՏեմ **Գ. Ստեփանյան**, նույն տեղում:

[19] Արփավուտի (Շամախու գավառ) Ս. Մեսրոպ կամ Ս. Լուսավորիչ եկեղեցին նշված է 1916 թ. գործող եկեղեցիների ցանկում. տեմ նույն տեղում:

[20] Հնդարի Ս. Աստվածածին եկեղեցին ԺԹ. դարի 80-ական թթ. երկրաշարժի հետեւանքով գտնվում էր վթարային վիճակում: 1893 թ. հոկտեմբերին Սմբատյանցն օրհնել է սրբատաշ քարով կառուցված նորաշեն եկեղեցին. տեմ **Մ. Սմբատեանց**, Նկարագիր սուրբ Ստեփաննոսի, էջ 360. **Ս. Կարապետյան,** Շամախու գավառի գյուղերի պատմությունից, ԼՀԳ, 1989, թ. 12, էջ 69: Նույնի՝ Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 9: Եկեղեցին կառուցվել է 1844 թ., նշվում է 1916 թ. գործող եկեղեցիների ցանկում. տեմ **Գ. Ստեփանյան**, նշվ. աշխ., հավելված 5:

[21] Քովլուճի Ս. Աստվածածին եկեղեցին գոյություն չուներ 1980-ական թթ.: Տեմ **Ս. Կարապետյան**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 11: Գործող եկեղեցի է եղել 1916 թ. դրությամբ. տեմ **Գ. Ստեփանյան**, նույն տեղում:

[22] Բզավանդի Ս. Աստվածածին եկեղեցին հիմնավել էր 1980-ական թթ.: Տեմ **Ս. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 18: Գործող եկեղեցի է եղել 1916 թ.: Տեմ **Գ. Ստեփանյան**, նույն տեղում:

[23] **Մ. Սմբատեանց**, Նկարագիր սուրբ Ստեփաննոսի, էջ 364:

Սրբազանը բարեկարգել եւ ավարտին է հասցրել Շամախու թեմի առաջնորդանիստ Սաղիանի Ս. Ստեփաննոս կիսավեր վանքի նորոգումը, որը մեծ հանդիսությամբ օծվել է 1887 թ. նոյեմբերի 8-ին: Սաղիանը գավառի հինավուրց եւ հայահոծ գյուղերից է, այն հայտնի է նաեւ «Սաղքաւ» անվանումով[24]: Մինչեւ 1838 թ. վանքը եղել է եպիսկոպոսանիստ.: Վանական համալիրի մեջ մտնում են Ս. Ստեփաննոս եկեղեցին, միաբանական եւ տնտեսական շինությունները, պարիսպը, աղբյուրները, գերեզմանոցը: Դրանք վերանորոգվել են մի քանի անգամ, վերջինը՝ 1872 թ. հունվարյան երկրաշարժից հետո: Ի. դարի սկզբներին հայ-թուրքական ազգամիջյան բախումների հետեւանքով մեծ վնասներ է կրել եւ վերջնականապես ոչնչացվել է 1988-89 թթ.[25]:

Հոգեւոր առաջնորդ լինելու տարիներին Մ. Սմբատյանցը 1887 թ. բացել է տվել Սաղիանի Ս. Ստեփաննոս եկեղեցու հարավային դուռը[26] (նախկինում ուներ միայն մեկ դուռ՝ արեւմուտքից), որն «աւելի շքեղացրեց տաճարը»[27]: Տաճարի հարավային դռան բարավորին պահպանվել է արձանագրություն՝ 6 տող.

4. Առաջնորդ Հայոց թեմին Շամախւոյ/Մեսրովբ եպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի/Էօծ զտաճարս յետ բանալ տալոյ զՀարաւային/Նոր դուռնս ի յիշատակ ծնողացն, եւ յաւարտս/ածելոյ զշինութիւն տաճարիս ՛ի Հայրապետութեանմենայն /Տ. Մակարա. յամի Տ. 1887 եւ Հայկական (4378)[28]:

1888 թ. Սմբատյանցը Սաղիանում բացել է դպրոց, 1887-93 թթ. ընթացքում՝ վանքի կաթողիկեն, ապա տնտեսատան վրա կառուցել է վանահայրերի համար նախատեսված վեց սենյակները: Այդ մասին է վկայում սենյակների դռան ճակատի մեծածավալ արձանագրությունը.

5. Յամի Տեառն 1888 եւ Հայկական 4380, ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Մակարայ, եւ ի կայսրութեան ամենայն Ռուսաց Գ. Աղեքսանդրի, տնօրէնութեամբ Առաջնորդի Հայոց թեմի Շամախւոյ Մեսրովբ

[24] **Գ. Ստեփանյան,** Բաքվի նահանգի հայությունը XIX դարի II կեսին, Երեւան, 2010, էջ 88:
[25] **Գ. Ստեփանյան,** Շամախու հայոց թեմի Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկա վանքի պատմությունը, Երեւան, 2007, էջ 9:
[26] Սովորաբար միջնադարյան եկեղեցիներն ունեին գլխավոր մուտք՝ արեւմուտքից եւ երկրորդական՝ հարավից: Վերջինս կապված էր կլիմայական պայմանների հետ: Հյուսիսային մուտքը բացվում էր միայն կից կառույցների առկայության դեպքում: **Տ. Մարության**, Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Երեւան, 2003, էջ 76:
[27] **Մ. Սմբատեանց,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի, էջ 19:
[28] **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 19: Սույն արձանագրությունը պահպանվել է մինչեւ 1986 թ.: **Ս. Կարապետյան,** նշվ. աշխ., էջ 62, արձ. 309, լուսանկար 103:

Արքեպիսկոպոսի Ամբատեանց Նախիջեւանցւոց եւ վերակացութեամբ վանահօր Սուրբ Ստեփաննոսի վանից Սաղիանի Ստեփաննոս քահանայի Աստապատցւոյ՝ շինեցաւ առաջնորդարանս արդեամբք Բագուաբնակ պ. Կարապետ աղայի Լալաեանց, եւ յարգոյ եղբարց Բուդաղեանց, Ադամեանց, Մելիքեանց, Ասլանեանց, Եղիազարեանց եւ այլոց[29]:

Ս. Ստեփաննոս եկեղեցու արեւելյան ճակատին եւս պահպանվել է արձանագրություն՝ 12 տող.

6. Յամի ՏՌՆ 1893/ Հայկական 4385/ Ի Հայրապետութեան ամենայն Հայոց/ Տ. Մկրտչի, տնօրէնութեամբ առաջնորդ/դի թեմիս Մէսրոբ արքեպիսկոպոսի/ Սմբատեանց շինեցաւ կաթողիկէն/ վանից 600 ռուբլի տրօք Բագուա/բնակ պարոն Նիկոլայի Ստեփանեան Թա/դոսեանց ի յիշատակ հանգուցեալ Մարիա/մու դստեր Հօրեղբօր իւրոյ/ Զաքարիայի/ Թադոսեանց [30]:

Շամախու թեմի ուխտատեղիներից է Քարքանջ գյուղի Ս. Սահակ մատուռը (ԺԵ.-ԺԶ. դդ.): Այն գտնվել է գերեզմանատանը, կառուցվել է ազգությամբ պարսիկ Յուսուֆի պատվին, ով քրիստոնյա մկրտվելով՝ անվանակոչվել է Սահակ: Նրան քարկոծմամբ նահատակել են ՊԿԶ (1417) թվականին, որից հետո մարմինն այրել են, իսկ դիշերը լույս է ծագել նրա մոխրի վրա[31]: Մատուռի արեւմտյան մուտքի ճակատին կա 13 տող արձանագրություն.

7. Յամի ՏՆ 1891 Հայկական 4382/ տնօրէնութեամբ առաջնորդին/ Հայոց Շամախւոյ վիճակի/ Տ. Մեսրովբ արքեպիսկոպոսի/ Սմբատեանց Նախջեւանցւոյ/ Ի Հայրապետութեան ամենայն Հայոց/ Տ. Տ. Մակարայ կաթողիկ(ոյ)կոսի/ նորոգեցաւ սուրբ Սահակայ/ նահատակ վարդապետի մատուռս/՝ տրօք բարեպաշտ ազգայնոց/ մերոց որ ի Բաքու քաղաքի/ վերակացութեամբ Կարապետ քահանայի/ Տէր Կարապետեան Քարքանջու[32]:

Սեղանատան վերանորոգման մասին.

8. Յամի տեառն 1891 եւ Հայկական 4382. Հրամանաւ առաջնորդ Մեսրովբ արքեպիսկոպոսի շինեցաւ սեղանատունս ուխտաւորաց տրօք Բա-

[29] **Մ. Սմբատեանց,** նշվ. աշխ, էջ 127: Լուսանկարը չի պահպանվել:
[30] **ՀԱԱ,** գործ 79, թերթ 73ա. **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 79. **Ս. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 62, արձ. 313, լուսանկար 107:
[31] **Ս. Կարապետյան**, նշվ. աշխ, էջ 74:
[32] **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ, նույն տեղում. **Ս. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 74, արձ. 392, լուսանկար 143:

գուեցի Հայոց վերակացութեամբ Քարքանջայ Կարապետ քահանայի Տէր Կարապետեանց[33]:

Բաքու քաղաքում հայերը թվով երկրորդն էին մահմեդական բնակչությունից հետո: ԺԹ. դարում այստեղ գործում էին հայկական եկեղեցիներ, դպրոցներ, Մարդասիրական ընկերությունը, աղքատանոցը[34], մատենադարանը[35] եւ այլն: Ցավոք, բավարար տեղեկություններ չկան Բաքվի հայերեն վիմագրերի պահպանման մասին: Բաքվի հայկական դպրոցի պատին հիշատակվում է.

9. Յամի ՏՌՆ 1888 եւ Հայկական 4380 ի 23 հոկտեմբերի ի կայսրութեան ամենայն ռուսաց Աղէքսանդր Գ-ի, եւ ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Տ. Մակարայ, որոյ ի ներկայութեամբ ի ձեռն Առաջնորդի թեմին Հայոց Շամախւոյ Մեսրովբ Արքեպիսկոպոսի Սմբատեանց օրհնեցաւ հիմն Ազգային ուսումնարանիս, որ կառուցաւ արդեամբք Բագուայ հայ հասարակութեան եւ ջանիւք բարձրագոյնս հաստատել յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ Մարդասիրական ընկերութեան Հայոց Բագու քաղաքիս. Ի 25-րդ տարեդարձի նոյն ընկերութեան առ նախագահութեամբ Խորհրդոյ նորին Քրիստոփորի Անտոնեանց[36]:

Բաքվի հայկական գերեզմանատանը Մ. Սմբատյանցի օժանդակությամբ կառուցվեց քաղաքի երրորդ հայկական եկեղեցի-մատուռը: Կառուցման նախաձեռնողը Թիֆլիսեցի, սակայն բաքվաբնակ Մարիամ Գրիգորյան Միքատաձեն էր, ում առաջարկը մեծ ոգեւորությամբ ընդունեցին թե՛ սրբազանը, թե՛ քաղաքի հայ բնակչությունը: 1894 թ. Բաքվում Մ. Սմբատյանցի կողմից օրհնվեց եկեղեցի-մատուռի մարմարյա հիմնաքարը, իսկ 1895 թ. հունվարի 26-ին թեմի ժամանակավոր առաջնորդ Մակար եպս. Բարխուդարյանցն օծեց եկեղեցին Ս. Հովհաննես Մկրտիչ անվամբ, թեեւ Շամախու հայոց թեմի եկեղեցիների մասին կազմած տեղեկագրերում այն հիշատակվում է Ս. Հարություն[37]: Մարմարյա հիմնաքարին եղել է հետեւյալ չինարարական արձանագրությունը.

---

[33] **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 168: Սույն արձանագրությունը պահպանված չէր արդեն Ի. դ. 80-ական թթ.: **Ս. Կարապետյան**, նշվ. աշխ., էջ 75:

[34] Աղքատանոցի օրհնումը տեղի է ունեցել Ամենայն Հայոց Մակար Կաթողիկոսի կողմից 1888 թ., ինչի մասին վկայում է շինության պատին պահպանված ընդարձակ արձանագրությունը. տես **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 382:

[35] **Մ. Բարխուտարեանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, Երեւան, էջ 154:

[36] **Մ. Սմբատեանց**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի, էջ 381. **ՀԱԱ**, գործ 78, Տեղեկություններ Սաղիանի Ս. Ստեփաննոս եւ Մեյսարի Ս. Աստվածածին վանքերի մասին, թերթ 5:

[37] **Գ. Ստեփանյան**, Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, Երեւան 2007, էջ 164-165:

10. Յամի ՏՌՆ 1894 , եւ Հայկական 4386. զՀիմն ՍԲ Հարութեան տաճարիս՝ շինելոյ ծախուք Տփխիսեցի Հայազգի Մարիամու Գրիգորեան Միքատաճե էօծ Առաջնորդ Բագուայ նահանգի Մեսրովբ Արքեպլիսկոպոյս Սմբատեանց[38]:

Մ. Սմբատյանցը վերանորոգել է տվել քաղաքի գլխավոր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խարխլված գմբեթը[39]:

1897-1907 թթ. Մ. Սմբատյանցը հոգեւոր գործունեություն է ծավալել Սյունյաց Երնջակ գավառում: Ապրակունիսի Ս. Կարապետ վանքը միջնադարյան Հայաստանի գրչության խոշոր կենտրոններից մեկն էր, ունեցել է հարուստ գրադարան: 1892 թ. Սմբատյանցն այստեղից Մայր Աթոռի մատենադարան է տեղափոխել 5 ձեռագիր: 1897 թ. դրությամբ վանքում մնացել էր ընդամենը 4 ձեռագիր[40]: Տաճարին հարավից կցված է Ս. Ստեփաննոս մատուռը, որը կառուցվել է 1653-1656 թթ., իսկ արդեն 1714 թ. վերակառուցվել է Շոռոթեցի խոջա Այվազի նախաձեռնությամբ: Այստեղ եւս պահպանվել են Մ. Սմբատյանցի շինարարական գործունեությունը փաստող մի քանի արձանագրություններ: Ահա եկեղեցու ներսի վիմագիրը.

11. Յամի Տեառն 1900 եւ Հայկական 4393, Նորոգեցաւ կաթողիկէն եւ տանիքն տաճարի սուրբ Կարապետ վանիցս, հսկողութեամբ վանահայր Մեսրովբ Արքեպիսկոպոսի Սմբատեանց, ծախիւք Նախիջեւանայ գաւառի բարեպաշտ ժողովրդոց[41]:

Պահպանվել են եւս երկու արձանագրություններ, որոնցից մեկը փայտյա խաչկալի վրա է, մյուսը՝ վարագույրի: Խաչկալի արձանագրությունն է.

12. Յամի Տեառն 1898 եւ Հայկական 4390 Մեսրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց .Նախիջեւանցի ետ նորոգել զխաչկալս ծախիւք ժողովրդեան Նախիջեւանայ գաւառի[42]:

---

[38] **Մ. Սմբատեանց**, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի, էջ 308:

[39] **Գ. Ստեփանյան**, Համառոտ ակնարկ Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատմության, ԼՀԳ, 2009, 3, էջ 51:

[40] **Մ. Սմբատեանց**, Նկարագիր Երնջակայ, էջ 112-115:

[41] **Մ. Սմբատեանց,** նշվ. աշխ., էջ 19. **Ա. Այվազյան,** ՆՎԺ, հ. Դ., էջ 17, արձ. 19: Լուսանկարը չի պահպանվել:

[42] **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 8: Մ. Սմբատյանցի հիշատակության մեջ *ծախիւք* բառը տրված է *ծախուք* տարբերակով: Նորագույն շրջանում արձանագրությունը վերծանել է Ա. Այվազյանը, որից էլ վերցնում ենք. Տես **Ա. Այվազյան,** նշվ. աշխ., էջ 19, արձ. 41, լուսանկար 10ա, էջ 137:

Վարագույրի արձանագրությունն է.

13. Վարագոյրս յիշատակ է Ագուլեցի Դիւսարեանց Սարգսի կին Նունէի եւ որդւոցն Նորին Յովհաննիսի, Մկրտչի եւ Աննիկի ի դուռն սուրբ Կարապետին ի ժամանակս վանահայրութեան Մեսրովբ Արքեպիսկոպոսի Սմբատեանց. Ընթերցողք յաղօթս յիշեցէք Յամի Տեառն 1901 եւ Հայկական 4394 Նոյեմբ. 15[43]:

Այստեղ է գտնվում գավառի սրբությունը՝ Ամենափրկիչը (մասունքներ Քրիստոսի խաչափայտից եւ Աջից) եւ Հազարախաչը[44]: 1898 թ. Մ. Սմբատյանցը պատրաստել է տվել մեծադիր արծաթյա ոսկեզօծ Խաչ՝ կենաց փայտի մասունքները ամփոփելու համար:

14. Յամի Տեառն 1898, եւ Հայկական 4390. կազմեցաւ սուրբ Խաչս Ամենափրկիչ անւանեալ, յորում մասն խաչափայտին Քրիստոսի, ծախուք Նախիջեւանայ գաւառի հայ ժողովրդոց, կարգադրութեամբ Մեսրովբ Արքեպիսկոպոսի Սմբատեանց՝ յանուն Երնջակայ սուրբ Կարապետի վանից[45]:

Կարեւոր գործերից մեկն էլ 1900 թ. վանքի ջրաղացի վերանորոգումն է:

15. Յամի տեառն 1900, եւ հայկական 4393, հրամանաւ Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց վանքական ջրաղացս ի հիմանց նորոգեցաւ յիշատակ Ջուղայեցւոց, որք ուխտեալ են ջրաղացիս քարերը միշտ ընծայել վանքին[46]:

1898 թ. սրբազանը վանքի տարածքում հիմնել է նոր պարտեզ եւ այգի, իսկ ներքին ծախսերը հոգալու համար վանական դպրոցի մերձակայքում զբաղվել է շերամապահությամբ՝ տնկելով 1500 թթենի: Նա կարծում էր, որ «վանքերը պէտք է կառավարուեն իրենց կալւածների արդիւնքով՝ առանց սպասելու բարեպաշտ ուխտաւորների ակամայ տւած ողորմութեանը»[47]:

Այսպիսով, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի շինարարական գործունեության մասին ավանդող այս 16 վկայագրերը մեկ անգամ եւս ապացուցում են, որ հոգեւոր գործիչները, բացի իրենց հիմնական առա-

---

[43] **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 8. **Ա. Այվազյան,** նշվ. աշխ., էջ 19, արձ. 42, լուսանկարը չի պահպանվել:

[44] Հազարախաչի մեջ պահվում է Քրիստոսի լվացարանակոնքի մի մասը: Այս սրբությունն ընդունում էին անգամ մահմեդականները. տես **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 383: Հազարախաչը ներկայումս գտնվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

[45] **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 70:

[46] **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 60: Այս եւ նախորդ արձանագրություններն արդեն Ի. դարի 80-ական թթ. հավանաբար տեղում չեն եղել, քանի որ չեն հիշատակվում Ա. Այվազյանի ուսումնասիրության մեջ:

[47] **Մ. Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 42-43:

քելութիւնից, ջանք ու եռանդ չեն խնայել՝ պահպանելու եւ վերականգնելու հայկական հոգեւոր շինությունները: Այդ առումով Մակար Կաթողիկոսը նշում է. «Գովանի նշանակք առաքելաշաւիղ եպիսկոպոսութեան, որովք զանձիդ ընծայեցուցանես յօրինակ բարի բանաւոր հօտին Քրիստոսի, յանաղարտ պահպանութիւն կարգաց եւ կանոնաց Հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ»[48]:

Ցավոք, Սրբազանի կողմից բարեկարգված կամ կառուցված այդ շինությունների մեծ մասը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս եւ հավանաբար արդեն գոյություն չունի: Վերոնշյալ արձանագրությունների քարեղեն ապացույցների պատառիկներն են մասամբ մեզ հասել՝ Ս. Կարապետյանի եւ Ա. Այվազյանի Ի. դարի 70-80-ական թվականներին կատարած ուսումնասիրությունների շնորհիվ: Այդ տարածքներում դարեր շարունակ ծաղկել է հայկական մշակույթը, հավատքը, դպրությունը, ինչի մասին են վկայում ոչ միայն մատենագիտական աղբյուրները, այլեւ վիմական արձանագրությունները:

РЕЗЮМЕ

Архиепископ Армянской Апостольской Церкви Месроп Смбатянц (1833-1911) развил свою деятельность в исторических армянских регионах Гегаркуник, Нахиджеван, Ернджак и Албания. Параллельно он основал ряд построек, на стенах которых оставил свыше десятка эпиграфических надписей строительного характера. Эти свидетельства о строительной деятельности Месропа Смбатянца лишний раз доказывают, что деятели армянского духовенства не жалели энергии и усилий, чтобы сохранить и восстановить армянские религиозные постройки. К сожалению, большинство из этих построек находятся за пределами границ Республики Армения и наверно уже не существуют.

SUMMARY

Archbishop of the Armenian Apostolic Church Mesrop Smbatyants (1833-1911) undertook his activities in historical Armenian provinces Gegharkunik, Nakhijevan, Ernjak and Aghvank. At the same time he built various buildings, on the walls of which he left more than a dozen epigraphic inscriptions with constructional content. These data tell about Mesrop Smbatyants' constructional activities and attest once more that the Armenian clergy, in addition to their main mission as spiritual leaders, did not spare any effort and energy to preserve and restore Armenian religious buildings. Unfortunately, the great part of the buildings reconstructed by the Archbishop are located outside of Armenia and probably do not exist anymore.

[48] **Մ. Սմբատեանց,** նշվ. աշխ., էջ 567: